

Ուխտ, որ նախաձեռնել է Արցախի նախագահը

Արաքսի երբեմնի ծաղկուն հովտի վերակենդանացման, լքված հողափորածքների վերամշակման ու բերքառատ դաշտերի եւ այգիների վերածման մասին հաճախ էր խոսվում առանձին անհատների կողմից, սակայն ազատագրված պատմական այդ հողահանդակի նկատմամբ միայն պետական մոտեցումն ազդակ հանդիսացավ ռազմավարական ծրագիր մշակելու եւ նրա իրականացմանը հետամուտ լինելու համար: Հովտի բարեբեր հողը, բնակլիմայական հրաշալի պայմանները լավ հիմքեր են ստեղծում փրկելու եւ արարելու, «հացի խնդիր» լուծելու համար: Մասնագետների հաշվարկներով գրեթե 10 հազար հեկտար հողահանդակների վերամշակման դեպքում միանգամայն իրական է դառնում երկրի պարենային ծրագրի իրագործումը, եւ գյուղատնտեսական մթերքների արտահանման գծով Արցախը միջազգային շուկայում բավականին շահավետ դիրքերում կարող է հայտնվել: Հացահատիկ, խաղող, միրգ, մեղր, բանջարեղեն, միս, կաթ, ձուկ... Ահա մթերքների ոչ ամբողջական փասականին, որ այսօր արտադրվում է եւ շրջանակներն ընդլայնելու միտում ունի:



Ինչպե՞ս կայացավ Բիշբեկյան հանդիպումը



ՌԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

1994թ. ապրիլի 15-ին կայացավ ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների նիստը: Նիստում ընդունվեց հայտարարություն, որով դարաբաշխման հակամարտության կողմերին կոչ էր արվում սեղմ ժամկետում դադարեցնել ռազմագործողությունները եւ հաստատել զինադադարի ռեժիմ:

Լրացավ ադրբեջանա-դարաբաշխման ճակատում զինադադարի ուժի մեջ մտնելու 20 տարին, ինչն արդյունք էր Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ Ղրղզստանի մայրաքաղաք Բիշբեկյան ձեռք բերված պայմանավորվածության: Հատկանշական է, որ հրադադարի ռեժիմն անհարկեմ երկու տասնամյակ է, ինչ պահպանվում է, եւ, ընդհանուր առմամբ, տարածաշրջանում անդորր է տիրում (չիաշված հակառակորդի կողմից սահմանային դիրքերում երբեմն արձանագրվող խախտումները): Եվ, փոխանակ Ադրբեջանի իշխանությունները նոր քայլեր կատարեն իրադադարը երկարաձգելու, ռազմագործողությունների վերջնական դադարեցման ու խաղաղ պայմանագրի պատրաստման ուղղությամբ, նոր անպատասխանատու կոչեր են հնչում Բաքվից: Առավել տարօրինակ է, երբ նման տխուր «առաքելություն» է որդեգրել երկրի նախագահը, այն էլ Բիշբեկյան պայմանագրի ստորագրման 20-ամյակի օրերին:

Բիշբեկյան հանդիպմանը, որին հրավիրվել էր նաեւ Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը, մասնակցում էին ԼՂՀ խորհրդարանի նախագահ Կարեն Բաբուրյանը (պատվիրակության ղեկավար), արտգործնախարար Արկադի Ղուկասյանը, խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանը, Աժ խոսնակի խորհրդական Վասիլի Աբաջանյանը, ինչպես նաեւ օգնականներ Աշոտ Ղուկասյանը եւ Լեւոն Մայիլյանը: Կարեւորելով հրադադարի վերաբերյալ համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը, ինչպես զրույցի ժամանակ խոստովանեց ԼՂՀ Աժ նախագահ Աշոտ Ղուկասյանը, նման մակարդակի հանդիպումներին մասնակցելու առումով, դա իր համար «առաջին հաջողությամբ դիմակայված փորձությունն էր»...

ԼՂՀ Աժ նախագահի համոզմամբ, Բիշբեկյան հանդիպումը եւ ընդհանրապես 1994թ. մայիսը, նշանակալի փուլ էր արցախյան հիմնախնդրի կարգավորման պատմության մեջ:

- Չնայած մինչ այդ ադրբեջանա-դարաբաշխման ճակատում ռազմագործողությունների դադարեցման մասին կնքվել էին պայմանագրեր, սակայն դրանք, որպես կանոն, լա-ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԷՋ 7

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր գաղափար իրականանալի է դառնում, երբ կա նպատակին հասնելու ցանկություն, կամք եւ հետևողականություն: Արաքսի հովտի վերակենդանացման ու վերաբնակեցման ծրագրի իրագործման պարագայում ԼՂՀ կառավարությունը համատեղել է ջանքերը համապատասխան գերատեսչությունների ու բարեգործական կառույցների հետ, եւ արդյունքում այսօր հարյուրավոր հեկտարներ հացահատիկի բերրի դաշտեր են, խաղողի ու մրգատու այգիներ, խնամքով մշակված ու առատ բերք խոստացող ջերմոցային տնտեսություններ, բանջարեղենի, սեխի եւ ձմերուկի պլանտացիաներ: Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ տարածքներում հիմնականում տքմուն են երիտասարդները, ովքեր ցանկություն են հայտնել բնակվել հովտում, իրենց ճակատագիրը կապել հայրենիքի այդ գողտրիկ անկյան հետ, ստեղծել սեփական տնտեսություն եւ նոր բնակավայրի հիմքերը դնել, անձնապես նպաստել Արցախի շենացմանն ու զորացմանը:

Արդեն երրորդ տարին է, ինչ պետության աջակցությամբ մարդկանց համար այստեղ աշխատանքի եւ կենցաղի /հանգստի/ նորմալ պայմաններ են ստեղծվում: Առաջին երիտասարդ ընտանիքներն ամրացել են հովտում՝ օրինակ ծառայելով սերնդակիցների համար: Ու, եթե մինչեւ հիմա նրանց համար, որպես կացարաններ, ժամանակավոր տնակներն էին օջախի «հավաքատեղի» հանդիսանում, ապա կառավարության ծրագրով նոր բնակավայրը նորակառույց, հարմարավետ տներով քաղաքատիպ ավան է հիշեցնելու, ուր ներկայումս արագ լուծում է ստանում ենթակառուցվածքների ապահովման խնդիրը: Իսկ երիտասարդ ընտանիքների նոր բնակատեղին, որ Արաքսյան խորհրդարանական անունն է կրում, շուտով կունենա իր դպրոցը:

Թե ինչ է իրենից ներկայաց-

նում վերակենդանացող հովտը եւ ովքեր են հանդիսանում նրան նոր կյանք ու ավիշ ներարկող հողագործներն ու այգեգործները, ովքեր այստեղ են եկել հայրենիքի կանչով, սրտի թելադրանքով, նրանց լավատեսությանն ու ծրագրերին մոտիկից ծանոթանալու համար ապրիլի 26-ին Արաքսյան էր այցելել շուրջ 700 երիտասարդ, ինչպես Արցախի տարբեր բնակավայրերից, այնպես էլ Սյունիքի մարզից: Իսկ նման հնարավորություն նրանց ընձեռել էր ԼՂՀ նախագահ Բակր Սահակյանը, ով երկրի պետական այրերի եւ ՊԲ բարձրաստիճան սպաների ուղեկցությամբ շրջայց էր ծրագրել Արցախի հարավային սահմանամերձ տարածքներում:

Արաքսյանի հիմնադիրներից է Վարդանյանների ընտանիքը, ուր ծնվել է նրանց առաջնեկը: Տան տիկինը՝ Սոնան, խոստովանում է, որ սկզբնական շրջանում, իրոք, «հեշտ չի եղել հարմարվելը» եւ ոչ քիչ դժվարություններ են հաղթահարվել: «Այն ժամանակ կացարաններում էլեկտրական հոսանքը բացակայում էր ու կենցաղային խնդիրներում շատ էինք մեղվում: Հիմա վիճակը լիովին փոխվել է, հարմարվել ենք, - ասում է: - Համոզվելու համար սեփական աչքով կարող եք տեսնել, որ վատ չենք ապրում: Լավ աշխատում ենք, լավ էլ վաստակում: Մի քանի տարուց հետո կայուն տնտեսություն կունենանք, իսկ մշակվող դաշտերից ու երիտասարդ այգուց այնքան բերք կունենանք, որ լիովին կլուծենք ֆինանսական բոլոր խնդիրները եւ շահույթով կաշխատենք: Պետությունն ամեն կերպ խրախուսում է մեզ, շուտով հարմարավետ բնակարաններ կտեղափոխվենք: Նախորդ այցի ժամանակ վարչապետը խոստացավ, որ նոր ուսումնականում դպրոց էլ կունենանք: Այսինքն՝ իմ որդին սովորելու է նորակառույց կրթօջախում: Իսկ եթե մանկապարտեզ, դպրոց է բաց-

վելու, Արաքսյանը, մենք՝ այստեղ բնակվողներս, պայծառ ապագանք ունենալու», - իր համոզմունքն է հայտնում Ս.Վարդանյանը եւ երիտասարդներին կոչ անում իրենց օրինակին հետեւել եւ արմատ ձգել Արաքսի բարեբեր հովտում... Իսկ նրանց թվում, որ եկել են Արցախից եւ Սյունիքից, քիչ չեն նոր բնակավայրին իրենց բախտը կապել կամեցող երիտասարդները, ովքեր մարտնչելով հետաքրքրվում էին աշխատանքի պայմաններով, հաղորդակցվում տեղաբնակների հետ եւ փորձում բացահայտել հովտի, նրա ձգող ուժի խորհուրդը: Ու մայր Արաքսը կանչում է նրանց, հորդորում տեղ կանգնել պապերից ժառանգած պարտություններին, ազատագրված հողերին:

Արաքսի հովտում նախանշված լայնածավալ ծրագրերին Արցախի հարավային թեւ այցելած երիտասարդներին անձամբ տեղեկացնում է նախագահ Բակր Սահակյանը՝ կարեւորելով հողերի վերանշակման եւ տարածքի վերաբնակեցման ռազմավարական նշանակությունը երկրի կյանքում: Կկառուցվեն դպրոցներ եւ նախադպրոցական հիմնարկներ, մշակութային օջախներ, ճանապարհներ, հիդրոէլեկտրակայաններ, գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործարաններ... Ու այդ խնդիրների լուծման բանալին գտնելով Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնության մեջ, Բ.Սահակյանը հավատացած է, որ «Հերթական փորձությունը եւս հաջողությամբ կպսակվի, քանզի այցի մասնակիցներից շատերն արդեն բարձրաձայնում են իրենց մտադրացման մասին եւ պատրաստակամ են սատարել պետությանը, նրա կողմից ձեռնարկվող քայլերին իրենց մասնաբաժինն ունենալ: Ովքեր մտադիր են գալ ու հաստատվել Արաքսի ափին, նոր շունչ ու ոգի հաղորդել հայրենական հողերին, գորավիզ լինել

հայրենիքի այն պաշտպաններին, ովքեր իրենց մարտական ծառայությունն անցկացնում են սահմաններ՝ դիրքերում՝ ապահովելով երկրի անվտանգությունը»: Բարի երթ մաղթելով երիտասարդներին, ԼՂՀ նախագահը հավաստիացրել է, որ պետությունը նրանց երբեք մեճակ չի թողնի եւ կբաշխվի յուրաքանչյուր բարի առաքելություն: Իսկ Արցախի հոգեւոր թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Սարտիրոսյանն օրհնելով նրանց ուխտը, նկատել է, թե «այդ ձեռնարկմամբ մենք ավելի կմոտենանք մայր Արաքսին, մեր նվիրական իղձերին ու նպատակներին»:

Ողջունելով ուխտի մասնակիցներին՝ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանն այն միտքը հայտնեց, թե «Պատերազմում հաղթող ժողովուրդը պիտի հաղթանակներ նվաճի նաեւ աշխատանքի ճակատում, տնտեսության մեջ, ու այդ առումով մենք ձեռնաչափով հանդիպումները հայրենասիրական դասեր են սերունդների համար»: Ընդ որում՝ նա ընդգծեց, որ նման ուժ ինքը տեսնում է երիտասարդների մեջ եւ հավատացած է, որ «Արաքսի հովտի այցելած այունեցիներից ոչ քչերը կնախընտրեն արցախյան իրենց քույրերի ու եղբայրների հետ ստանձնել նոր բնակավայրի շենացման պատասխանատվությունը, եւ, իբրեւ ասվածի վկայության, հենց այսօր մեկական ծառ տնկել»:

Միջոցառմանը ներկա երեւանի պետական լսարանի արեւելագիտության ֆակուլտետի ղեկան Գուրգեն Մելիքյանը երեք տասնակեց այդ օրը՝ երիտասարդներին պատգամելով հոգատար գտնվել, քանի որ լավ խնամելու դեպքում «ստույները երկար են ապրում ու նրանք պատմության յուրահատուկ վկաներ են»:

ՌԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ստեփանակերտ

ՄՅՈՒՆԵՑԻ ՍԱՎԱՌՆՈՐԴԻ 100-ԱՄՅԱԿԸ

ՋԵԱՐԱՄԻՏ ՕԳԱՉՈՒՆ, որին վարահեցին Ռայխսֆրագի վրա Հաղթանակի դրոշի լուսանկարումը

2014 թվականին լրանում է Հայրենական մեծ պատերազմի մասնակից, Նշանավոր ու խիզախ զորիսացի օդաչու Սմբատ Ավանեսի Մկրտչյանի 100-ամյակը, որի սխրանքներին եւ ուշագրավ մարտական ծառայությանը ծանոթանալիս, հիրավի, հպարտանում եւ նման հայրենակից ունենալու համար:

Սմբատ Մկրտչյանը ծնվել է 1914թ. դեկտեմբերի 12-ին Գորիսի Տաթև գյուղում: Մեկ տարեկանում զրկվել է հորից, եւ մայրը նրա հետ տեղափոխվել է Գորիս: Մի քանի տարի հետո փոքրիկ Սմբատը տեղափոխվել է Բաքու, այնտեղ դպրոց հաճախել: Աշխատել վաղ է սկսել՝ 15 տարեկանից, այդ ժամանակ՝ 1929-1931թթ., Բաքվում սովորել է նաեւ Լենինի անվան արհեստագործական ուսումնարանում: 1931-1935թթ. «Բաքվի աշխատավոր» գործարանում առաջնագործ է աշխատել:

1935 թվականին զորակոչվում է խորհրդային բանակ. մինչեւ 1937թ. եղել է Լուգանսկի ռազմական ավիացիայի օդաչուների դպրոցի կուրսանտ, եւ հենց դա կանխորոշեց նրա կյանքի հետագա ուղին, որը կապվեց ռազմական ավիացիայի հետ: Ծառայեց Անդրկովկասի ռազմական օկրուգի տարբեր զորամասերում: 1938թ. երեւանի կապի 16-րդ առանձին ավիացիոն էսկադրիլիայի կրտսեր օդաչու էր, իսկ 1939թ. փետրվարից մինչեւ սեպտեմբեր երեւանի ռազմաօդային ջոկատում եղել է օդաչուներ վերապատրաստող հրամանատար: 1940-ից նշանակվում է 45-րդ բանակի ջոկի հրամանատար՝ Գյումրի քաղաքում: Երբ սկսվում է Մեծ հայրենականը, 1941թ. նոյեմբերին Ս.Մկրտչյանին ուղարկում են Դրիմի ճակատ: Չորս տարվա ընթացքում տաքեցի բազեն՝ որպես ավիացիոն, հետագայում՝ ավիատեխնիկայի հրամանատարի տեղակալ, կատարել է 400-ից ավելի մարտական թռիչք:

Նրա ռազմական ուղու մի քանի դրվագ միայն արդեն իսկ ուշագրավ են, եւ նրան զինվորական պարգևների են արժանացրել:
... Եսկադրիլիայի շտաբում օդաչու Մկրտչյանը ստացել է մարտական առաջադրանք՝ հայկական դիվիզիայի հրամանատար Ջաքիյանին հասցնել բանակի հրամանատարության ուղարկած ծրարը, իսկ Ջաքիյանի դիվիզիան այդ ժամանակ Վլադիվադիկ մոտ շրջափակել էին հակառակորդի գերազանց ուժերը: Բարդ ու պատասխանատու առաջադրանք էր. պետք էր ամեն զնով տեղ հասցնել ծրարը: Չյուն էր տեղում, ամպերը ցածր էին ու խիտ, գետինը գրեթե չէր երևում: Ինքնաթիռը ռազմաճակատի գիծն անցավ ցածր բարձրությամբ, եւ գերմանացիները զնդացրային ուժեղ կրակ բացեցին նրա վրա: Վնասվում է ինքնաթիռի ղեկային համակարգը, եւ մեծ ջանքեր գործադրելով՝ հաջողվում է վերջապես վայրէջք կատարել. տեղ են հասնում, Ջաքիյանին փոխանցում ծրարը: Մկրտչյանը զինվորների օգնությամբ շտապ վերանորոգում է կարգի բերում վնասված սարքավորումը: Իսկ ծրարում, պարզվում է, դիվիզիան շրջապատումից դուրս բերելու պլանն էր...

Մեկ այլ դեպքում ռազմական գործողությունների ժամանակ օգտագործվել է մեր հայրենակից օդաչուի հնարամտությունը. Ստալինգրադի մոտ ռմբակոծիչների զունդը տեղավորվել էր Վուլգայի ձախ ափին, օդաչուներն օրուգիշեր համգիստ չունեին: Ծանր ռմբակոծիչները հարվածներ էին տեղում հակառակորդի Կոտելնիկովյան խմբավորման վրա, որը ձգտում էր ճեղքել շրջապատման գիծը, իսկ թեթև ռմբակոծիչներն անմիջականորեն մասնակցում էին խմբավորման ջախջախմանը:

Մի անգամ՝ թռիչքի ազատ ժամին, լեյտենանտ Մկրտչյանը հանդիպեց իր մարտական ընկերոջը՝ ռազմաճակատում որպես խիզախ օդաչու հայտնի Վանուշ Բաղդասարովին: Սմբատը նրան ասում է. «Մեր թեթև ռմբակոծիչները միանգամից վերցնում են 25 կիլոգրամանոց 8 ռումբ, իսկ ավելի լավ չի՞ լինի, եթե 25 կգ-անոցի փոխարեն վերցնենք 2.5 կգ-անոց, այդ դեպքում թշնամու զլխին կարող ենք միանգամից թափել 80-100 ռումբ: Շրջապատված թշնամին չունի ամուր ինժեներական կառույցներ, եւ նրան խոցելու համար թեթև ռումբերն էլ բավարար են»:
Իսկ երբ զրուցակիցը հարցնում է, թե որտե՞ղ պիտի տեղավորեն այդքան ռումբերը, Մկրտչյանը պատասխանում է, որ դրա մասին էլ է մտածել. մանր ռումբերը կարելի է արկղերով տեղավորել հենց խցիկում եւ ձեռքով նետել, իսկ դա պետք է կատարել ոչ թե ցերեկը, այլ գիշերը եւ այնպես, որ հակառակորդը չկարողանա գուշակել, թե դրանք ինչպես եւ որտեղից են թափվում:

Գնդի հրամանատարն ընդա-



զ ո Ր Դ
գ ի շ Ե Ր Վ
ը նթացքում, երբ շատ մութ էր, եւ գերմանացիները խաղաղ էին ու չէին սպասում, որ նման գիշերը հակառակորդն օդ կբարձրանա, հանկարծ նրանց դիրքերում սկսում են պայթել փոքրիկ ռումբերը: Թշնամու ճամբարում խառնաշփոթ է սկսվում. չեն հասկանում՝ որտեղից են գալիս ռումբերը: Մկրտչյանը դիմել էր ռազմական հնարամտության. ինքնաթիռները մեր տարածքում վերցրել էին մեծ բարձրություն, ապա հանգրեղ շարժիչները եւ անաղմուկ անցել հակառակորդի կողմը, իսկ առջեկից գնա-



ռաջում է օդաչուների առաջարկին եւ էսկադրիլիայի հրամանատարին հրահանգում առաջարկը ստուգել գործնականում: Մկրտչյանի իր ջոկատը սկսում է պատրաստել գիշերային թռիչքի, ցերեկը մի քանի անգամ օդ է բարձրանում, ստուգում թռիչքի մանրամասները, իսկ գիշերը փորձեր կատարում մեր տարածքում: Հա-

ցող մեքենան հրթիռների միջոցով լուսավորել էր տեղանքը:
Եվ այդպես, մոտ մեկ ամիս խորհրդային ռմբակոծիչները Մկրտչյանի օրինակով մահ ու սարսափ էին տարածում թշնամու շարքերում: Հետագայում գերված զինվորները պատմում էին, որ այդ գիշերային անսպասելի ռմբակոծությունները

ս արսա -
փեցնում էին ոչ
միայն հասարակ սպանե-
րին ու զինվորներին, այլեւ բարձր
հրամանատարությանը:

Իսկ ահա վերջին մարտական թռիչքով օդաչու Մկրտչյանը պատմական առաջադրանք կատարեց:
1945թ. մայիսի 2-ին հրամանատարությունից նրան կանչում եւ որպես խիզախ օդաչուի՝ պատմական առաջադրանք են տալիս՝ լուսանկարել Բեռլինում Ռայխստագի վրա բարձրացված Հաղթանակի դրոշը: Թռչում է Բեռլին. առաջին անցման ժամանակ հնարավոր չի լինում լուսանկարել, ճիշտ չէր հաշվարկել բարձրությունը: Երկրորդ դարձին կարիք եղավ ավելի ցածր թռչել, եւ ժապավենի վրա արտացոլվեց պատմական դրոշը, որը դարձավ խորհրդային բանակի հաղթանակի խորհրդանիշը: Սմբատ Մկրտչյանն անթերի կատարեց իր վերջին մարտական առաջադրանքը: Պատմության մեջ հիմա մի քանի անուններ են գրանցվել, որոնք հայտնի են դարձել հենց նրանով, որ լուսանկարել են այդ դրոշը: Նրանք լուսանկարիչներ ու ֆոտոլրագրողներ են: Ժամանակն է, որ մեր հայրենակցին էլ հիշենք այդ առումով. պարզապես նրա լուսանկարը ռազմական արիստիկա եւ ոչ թե հրապարակման համար էր, ուստի պատմությունը ոչինչ չի ասում Սմբատ Մկրտչյանի մասին...

Օդաչուն մարտական ուղին անցել է ռազմական երեք ճակատում. պատերազմը դիմավորել է Դրիմի ճակատում, ապա մարտնչել Ստալինգրադի ճակատում եւ հաղթանակը դիմավորել 1-ին բելառուսական ճակատում: Եղել է 455-րդ առանձին կապի ավիատեխնիկայի հրամանատարի տեղակալը: 1943-ի հունվարի 20-ից մինչեւ փետրվարի 7-ը գերմա-

նացիների մոտ գերի է ընկել. ինչպես ինքն է պատմում ինքնակենսագրականում՝ թռիչքի ժամանակ իր վրա ինքնաթիռը խոցվել է հակառակորդից եւ վայրէջք կատարել նրանց գրաված տարածքում: Այդուհանդերձ, նրան հաջողվել է փետրվարի 7-ին՝ էվակուացիայի ժամանակ, փախչել ու հասնել իր գործնաս, շարունակել թռիչքները:

Հետաքրքրությամբ ես աչքի անցկացնում օդաչուի թռիչքների անձնական գրքույկը. այնտեղ նշված են Ս.Մկրտչյանի բոլոր թռիչքները՝ մասնաբաժնով՝ ամսաթիվը, թռիչքների քանակը, ինքնաթիռի տիպը, թռիչքի տեսողությունը, ուղղությունը. վարժություն, թե՞ ռազմական առաջադրանք է եղել: Ընդ որում՝ եթե մարտական առաջադրանքով թռիչքները 400-ից ավելի են եղել, օդաչուի ընդհանուր թռիչքների քանակը հազարների է հասնում: Իսկ թռչել է նա Y-2, P-1, P-5, T-3, P-6, Y-12, Սո-2, T6-3 տիպի ինքնաթիռներով: Ընդ որում՝ հաղթանակից անմիջապես առաջ՝ ապրիլի վերջերից սկսած եւ արդեն մայիսյան առաջին օրերին նրա թռիչքների ուղղության մեջ շատ է հանդիպում Բեռլինը:

Սմբատ Մկրտչյանը բազում պարգևներ է ստացել, նշենք միայն առավել արժեքավորները. պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» ու Կարմիր դրոշի շքանշաններով, «Բեռլինի գրավման համար» եւ «1941-45թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ հաղթանակի համար» մեդալներով:

Պարգևատրման թերթիկների արխիվային քաղվածքներից իմանում ենք, որ օդաչու Մկրտչյանին բնութագրել են իբրեւ աշխատասեր, եռանդով լի, քաղաքակիրթ սպա: Ունենալով թռիչքային աշխատանքի մեծ փորձ՝ հմտորեն փոխանցել է ավիատեխնիկայի ողջ թռչող անձնակազմին, նրա անմիջական վերահսկողությամբ եւ ղեկավարությամբ էսկադրիլիան ճակատային պայմաններում հաջող ու անվթար թռիչքներ է ունեցել: Առանց ժամանակ խնայելու օգնել է հրամանատարին զինվորների դաստիարակության հարցում, հոգ է տարել ինքնաթիռների նյութատեխնիկական մասի պահպանման համար:

1946թ. ռազմաօդային ուժերի կապիտան Սմբատ Մկրտչյանը զորացվում է բանակից եւ վերադառնում Գորիս, նրան էին սպասում կինը՝ Նոյեն Հայրապետյանը եւ ավագ որդին՝ Էռնեստը: Հետագայում եւս երկու զավակ է ունենում՝ Մարոն եւ Գագիկը: Ավագ որդին եւ դուստրն այժմ համապետությունից դուրս են բնակվում, կրտսերը՝ Գորիսում: Ի դեպ, Գագիկի որդին կրում է հայտնի պապ Սմբատի անունը:

Որդու պատմելով՝ հայրը միշտ կարտեղ եւ պիղել է երկվորյակը, ապրել երկնքով: Պատերազմի վետերանին շատ էին կանչում կրթօջախներ՝ նոր սերնդին անցած օրերի մասին պատմելու եւ դաստիարակիչ գրույցների համար, հայրենի քաղաքում ճանաչում եւ գնահատում էին նրան: Ձորացրվելուց հետո Գորիսում տարբեր աշխատանքներ է կատարել. մեկ տարի վարսավիր է աշխատել, 1947-1950թթ. Գորիսի մեխանիկական գործարանում՝ առաջիկ, 1950-51թթ.՝ Գորիսի Հայառի խանութի վարիչ, 1951-ից Գորիսի սեսյունի կայանում՝ լաբորանտ, իսկ 1962 թվականից աշխատել է համապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում: 1965թ. մինչեւ կյանքի վերջը եղեգճաճորի օդանավակայանի պետն էր: Ցավոք, պատերազմի բովով անվճար անցած օդաչուի կյանքը ժամանակից շուտ խլեց հիվանդությունը. վախճանվեց 1970 թվականին եւ հանգչում է Գորիսում:

Խոսք հիշատակի



Օրբեյանները

Հատված Էդուարդ Ջոհրաբյանի համանուն վեպից

... 1954թ. Երեւանի ռադիոկոմիտեում ստեղծվեց գործիքային կվինտետ: Հանրապետությունում անվանի երգահաններ շատ կային, որոնց կարելի էր հրավիրել նորաստեղծ կվինտետը կազմակերպելու և ղեկավարելու համար: Բայց կոմիտեի ղեկավարները կանգ առան Երեւանի պետական կոնսերվատորիայի ուսանող Կոնստանտին Օրբեյանի վրա և չսխալվեցին իրենց ընտրության մեջ: Շուտով նորաստեղծ կվինտետը երիտասարդ ղեկավարի ջանքերով հայտնի դարձավ ամբողջ հանրապետությունում և իր հարուստ, բազմաբովանդակ ծրագրով վայելեց երաժշտասեր հասարակության սերն ու համակրանքը: Ավարտելով կոնսերվատորիան՝ քանակական Կոնստանտինը նորից վերադարձավ Հայաստանի պետական եստրադային նվագախումբ: Բայց այս անգամ արդեն որպես նվագախմբի գլխավոր ղեկավար: Դժվար էր աշխատելը: Երաժիշտներից մեկը թողնում էր նվագախումբը, մյուսը՝ գալիս, լրացնում նրա տեղը: Եվ այդ նորեկի հետ ստիպված էր լինում աշխատել, աշխատել երկար ու համառ, մինչև նա ընտելանում էր կոլեկտիվին կամ յուրացնում այս կամ այն նոր երաժշտությունը: Հատկապես հաճախակի փոխվում էին երգիչները. Ռաշիդ Բեյրուբովի, Արթուր Այդինյանի, Ժակ Դուվալյանի հեռանալուց հետո Կոնստանտինը մեծ դժվարությունների առջև կանգնեց, մինչև փնտրեց ու գտավ նոր երգիչ-կատարողներ, նոր շունչ ու ալիք մտցրեց նվագախմբում, գտավ գործիքավորման նոր ձևեր ու մեթոդներ, զարգացրեց և ավելի բարձր մակարդակի հասցրեց հայ եստրադային արվեստը: Նվագախմբի կատարողական արվեստը բարձր մակարդա-

կի վրա պահելու հետ մեկտեղ նա գրում էր նոր երգեր, երաժշտություն սիրո, հայրենասիրական և իր նախընտրած այլ թեմաներով: Կոնսերվատորիան ավարտելուց հետո նա գիտակցում էր, որ իսկական երգահան լինելու համար պիտի շատ ստեղծագործել և այդ ստեղծագործությունների գնահատականը պիտի տային մարդիկ, հասարակությունը: Եվ այդ գնահատականը տրվեց: Այնպիսի երգեր, ինչպիսիք են «Երեւան», «Գարունն իմ սրտում», «Երեւանյան մեղեդի», «Շնորհակալություն կյանքին», «Անուշի երգը», «Գալիս ես, գալիս ես» և շատ ուրիշներ լայն ճանաչում են գտել խորհրդային Միությունում, իսկ «Մի-րում են քեզ, Մոսկվա» երգը Հունգարիայում կայացած միջազգային մրցույթում արժանացավ մրցանակի: Համամիութենական առաջին կարգի մրցանակին էր արժանացել նաև ֆաշիստական Գերմանիայի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 30-ամյակին գրված «Կեչիների աղմուկը» երգը: Օրբեյանի գրչին են պատկանում նաև «Հուշարձան», «Հայրենական պատերազմի հերոսներին», «Մենք խաղաղության կողմնակից ենք» և այլ նվագախմբային խորեոգրաֆիկ պատկերների շարքը, երգեր՝ գրված մարզական թեմաներով, այլ ստեղծագործություններ: Երգահանի մի քանի տասնյակ երգերը, հայերեն ու ռուսերեն տեքստերով, նույնպես գրված, ամփոփված են հինգ ժողովածուի մեջ, որոնք լույս են ընծայել համամիութենական «Սովետական մուզիկա» և «Հայաստան» հրատարակչությունները: Խորհրդային Միության և արտասահմանյան երկրների տարբեր անկյուններում բարձր հնչեց Հայաստանի պետական եստրադային նվագախմբի և նրա երիտասարդ

ղեկավարի՝ երգահան Կոնստանտին Օրբեյանի անունը: Այդ անունը Միության և աշխարհի երաժշտասեր հասարակայնության սիրտը մտավ Մոսկվայում և տարբեր երկրներում կայացած համաշխարհային փառատոների ժամանակ և դրանից հետո: Կոնստանտին Օրբեյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական եստրադային նվագախումբը մասնակցեց մի շարք փառատոների, արժանացավ բարձր մրցանակների: 1957 թվականին Լենինգրադում կայացած եստրադային նվագախմբերի ազգային փառատոնում Օրբեյանի նվագախումբը ներկայացրեց խորհրդային Միությունը: Այս փառատոնին մասնակցում էին նաև ռումինական «Մալազամբա» և Միշել Լեգրանի ղեկավարած ֆրանսիական այն ժամանակվա նշանավոր խմբերը: Հայաստանի պետական եստրադային խորհրդային Միության անունից մասնակցեց նաև 1964 թվականին արտասահմանում կայացած «Բարեկամություն» փառատոնին, որին ներկայացել էին նաև Անգլիայի, Հարավսլավիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և մի շարք այլ երկրների նշանավոր նվագախմբեր: Օժտված լինելով մեծ երաժշտին հատուկ շնորհքով և հնարավորություններով՝ Կոնստանտին Օրբեյանն իր աշխատանքային տարիների ընթացքում նոր աստիճանի բարձրացրեց նվագախմբի արտօնափունջը մակարդակը, ոճական դեմքը, նա կարողացավ ժամանակակից եստրադային երաժշտության լավագույն գծերին միացնել ազգային առանձնահատկությունները, կարողացավ նոր ճանապարհով տանել հայ եստրադային երգը և համապատասխանեցնել ժամանակի ոգուն:

Վախճանվել է Կոնստանտին Օրբեյանը

ՍԿԻՉԲԸ ԷՋ 1

Ֆոնհան», «Ամնահություն» բալետը, «Ձանգեզուր» սիմֆոնիկ պոեմը և ուրիշ ստեղծագործություններ, որոնք վկայում են կոմպոզիտորի մեծ տաղանդի մասին: Իր կոլեկտիվի հետ Օրբեյանը հանդես է եկել աշխարհի 40 երկրում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մերձավոր արևելքում և այլուր: Նրա նվագախումբը խորհրդային Միությունում առաջինը և միակն էր, որ հայ եստրադային արվեստը ներկայացրեց ԱՄՆ-ում: Համերգներից հետո «Նյու-Յորք թայմս» թերթը գրել է. «Հայաստանի եստրադային նվագախմբի ելույթներից հետո մեզ մտքովեց այն առասպելը, թե ի՞նչու ում ջազն արգելված է և գտնվում է ընդհատակում»: Իսկ այդ հաջողությունները կապված են հայ անվանի կոմպոզիտորի հետ, որին արժանի գնահատական են տվել Արամ Խաչատրյանը, Էդուարդ Միքոզյանը, Ռոդոն Եչեղրինը, Յուրի Միլանտեը, Անտո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, ուրիշ նշանավոր երգահաններ, երաժշտագետներ: Օրբեյանի դպրոցն անցել են հայ և ռուս նշանավոր շատ երգիչներ, նրանք թվում Միոն Տերյան, Գեորգի Մինասյան, Իրինա Ալեգրովա, Լարիսա Դոլինա, Ալլա Պուգաչովա և ուրիշներ: 1974թ. արժանացել է ՀԽՍՀ, 1979թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչմանը: 1992թ. մեկնել է ԱՄՆ և բնակություն հաստատել Սան-Ֆրանցիսկոյում: 2012թ. պարզեատրվել է ՀՀ Պատվո շքանշանով: ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի ս.թ. ապրիլի 26-ի որոշմամբ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբեյանի մահվան կապակցությամբ ստեղծվել է թաղման կառավարական հանձնաժողով:

Այդ էր պատճառը, որ նվագախումբը մեծ ճանաչում գտավ նաև արտասահմանյան երկրներում, նոր փառքով պսակեց իրեն, ավելի ընդլայնեց իր ունկնդիրների թիվը: Լեհաստանում կայացած համերգներից հետո այդ երկրի «Նարոդնե ֆոնոն» թերթը նվագախմբի մասին լույս ընծայած իր հոդվածը վերնագրել էր «Լիակատար հաղթանակ»:

Չեխոսլովակյան «Ռուդե պրավո»-ն գրել է. «**Խորհրդային Հայաստանի պետական եստրադային նվագախումբը լավագույնն է եվրոպայում**»:

Բուլղարական «Ռաբոտնիչեսկոե դելո» թերթը նվագախմբի մասին իր թրթակցությունը եզրափակել է. «**Հայաստանի պետական եստրադային նվագախմբի պետը է նկատի ունենալ միջազգային համերգների ծրագիր կազմելու ժամանակ**»:

Իրավամբ միջազգային ճանաչման արժանացած Հայաստանի պետական եստրադային նվագախումբը կոնստանտին Օրբեյանի ղեկավարությամբ խորհրդային եստրադային արվեստն առաջին անգամ ներկայացրեց նաև Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

րում: Ամերիկյան նշանավոր թերթերը մասնավորապես նշել էին, որ դժվար թե եստրադային որեւէ նվագախումբ կան ջազ գարնացներ ջազի երկրին, ջազի հիմնադիրներ Արմատրոնգի, Օլիվերի, Էլիզաբեթի, Դեյվիսի, Թեյլորի և ուրիշ հանրահայտների հայրենիքին: Բայց մենք՝ ամերիկացիներ, գարնացանք և մեծ հաճույք ապրեցինք՝ ունկնդրելով Հայաստանի եստրադային արտիստներին:

Իսկ մի՞թե սա Օրբեյանին տրված ամենաբարձր գնահատականներից մեկը չէ:

Հայ արտիստներն իրենց եստրադային արվեստը հասցրել են նաև Մերձավոր արևելք, Հարավսլավիա, աշխարհի քառասուն երկրներ: Օրբեյանի նվագախումբը, մասնագետների կարծիքով, խորհրդային եստրադայի չափանիշն էր: Օրբեյանը խորհրդային, մասնավորապես հայկական եստրադայի և ջազի նշանավոր դեմքերից է: Նրա դարձն են անցել և իրենց տաղանդը բացահայտել երգիչներ Ջարուհի Տոնիկյանը, Էմնա Յուզբաշյանը, Լարիսա Դոլինան: Իսկ ջազային այնպիսի երգչուհի, ինչպիսին Տաբեթիկ Հովհաննիսյանն է, ամբողջ ԽՍՀՄ-ում չկար: Նա, Օրբեյանի արտահայտությամբ, խորհրդային ջազի առաջին լեդին էր: Նրա նվագախմբում են աշխատել նաև էլվիրա Մակարյանը, Նաթեթյա Սարգսյանը, Սյուզան Մարգարյանը, Նաթեթյա Սինեյնիկովան, Միոն Տերյանը, Էդգար Կարապետյանը, Գեորգի Մինասյանը: Նվագախումբը, ինչպես գտնում է մատերում, միշտ ուժեղ է եղել իր երգչուհիներով: Արտակարգ երեւոյթ էր երիտասարդ Բելա Դարբինյանի մուտքը նվագախումբ: Այստեղ աշխատել են նաև այժմ հանրահայտ երգչուհիներ Իրինա Ալեգրովան, Իրինա Պոնարովսկայան: Երբեմն նվագախումբ է հրավիրվել Ալլա Պուգաչովան: Օրբեյանը նրան մշտական աշխատանքի չէր վերցնում՝ հասկանալով, որ խորհրդային լսարանի պայմաններում նվագախմբի երգացանկն ու գործունեությունն ամբողջությամբ կախման մեջ կլինեին Պուգաչովայից: Իսկ նա մի երգչուհի է, ինչպես գտնում է մատերում, որը ստեղծված է խորհրդային լսարանի համար և ոչ ավելին:

Սակայն պետք է նշել, որ Պուգաչովայի ճակատագրում Օրբեյանը մեծ դեր է ունեցել: Այդ բանը չի ժխտում նաև Ալլան և բազմիցս նշել է հայ երգահանի դերն իր կյանքում: 1974 թվականին, երբ Օրբեյանը համամիութենական եստրադային մրցույթի ժյուրիի անդամ էր, առաջին անգամ՝ տեսավ այդ մրցույթի մասնակից Պուգաչովային և միանգամից նրա մեջ նկատեց երգչուհու տաղանդն ու շնորհքը: Ժյուրիի մյուս անդամ Իոսիֆ Կորգոնի հետ մի կերպ կարողացան Ալլային երրորդ մրցանակակիր դարձնել: Մի կերպ, որովհետև ժյուրիի մնացած անդամները Պուգաչովային չէին ընդունում: Իսկ մեկ տարի անց Օրբեյանը երգիչ Գեորգի Մինասյանի հետ հրավիրված էր Բուլղարիայում կայացած «Օսկե Օրփեոս» երգի փառատոնին: Սակայն այնպես ստացվեց, որ Օրբեյանը չկարողացավ մեկնել փառատոն, իսկ Մինասյանն առանց մատերոյի չուզեց գնալ: Օրբեյանն առաջարկեց և մեծ դժվարություններով հասավ նրան, որ Պուգաչովային ուղարկեց փառատոնին մասնակցելու: Այստեղ էլ երգչուհին հայտնի դարձավ իր «Առեկինո» երգով:

Իսկ Գեորգի Մինասյանը, Օրբեյանի կարծիքով, ԽՍՀՄ վերջին տասնամյակի լավագույն երգիչն էր: Նրա կատարած Օրբեյանի «Արեկինո», «Գալիս ես, գալիս ես», «Սերը չի ծերանում» երգերը դարձան համամիութենական շլագերներ:

Տասնչորս տարի անընդմեջ Կոնստանտին Օրբեյանը

«Օսկե Օրփենու» միջազգային ավանդական փառատոնի ժյուրիի անդամն էր ԽՍՀՄ-ից, այդ երկրի մշակույթի նախարարության գեղարվեստական խորհրդի, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ:

Նախապատվությունը հիմնականում տալով էստրադային ժանրին, Օրփենյանն ունի այդ ժանրի մեծածավալ բազմաթիվ ստեղծագործություններ: Դրանցից են հատկապես հանրահայտ «Ռե միմոր» լարային քառյակը, որը հեղինակին պարգևեց համաշխարհային փառատոնի դափնեկրի կոչումն էլ ոսկե մեդալ, «Ամնահություն» բալետը, սիմֆոնիկ, բազմաթիվ այլ գործեր, որոնք աչքի են ընկնում գեղարվեստական ու գաղափարական բարձր մակարդակով, ազգային նուրբ զգացողությամբ, թարմ մեղեդիականությամբ: Այդ ստեղծագործությունները լսել են աշխարհի շատ երկրներում և Մոսկվայի մասնագետներ, սովետական գնահատական, դրանց մասին գրել են մոլորակի տարբեր թերթերը, այդ թվում Սան-Ֆրանցիսկոյի հայ մշակույթային միության լրագիրը:

- Էստրադային երաժշտությունը սովորաբար համարում են թեթև ժանր, – ասում է մալետրոն, - բայց ես համաձայն չեմ... Գուցե կա՞ թեթև մոտեցում էստրադային երգի նկատմամբ, սակայն բոլոր ժանրերն էլ լուրջ են և պահանջում են լուրջ մոտեցում...

Այդպես ամենալայն լրջությամբ ու պատասխանատվությամբ նա ստեղծում է իր արվեստը լինի դա երգ, թե ծավալուն ստեղծագործություն:

Վերջին չորս-հինգ տարում Հայաստանում չէր: Եկել էր այն օրը, երբ նա բողեց նվագախումբը ոչ իր մեղքով և այն ցրվեց այնպես, կարծես չէր էլ եղել: Այդ բանը տեղի ունեցավ 1992 թվականին:

«Արամ Խաչատրյան» մեծ համերգաբաղնում, որը միշտ սուրբ տաճար է համարվել բոլոր արվեստասերների և այնտեղ աշխատողների համար, համատեղ, համերաշխ իրենց գործն էին տանում երգի-պարի, պարի պետական համույթների, սիմֆոնիկ նվագախմբի, Կոմիտասի անվան քառյակի և այլ կոլեկտիվներ: Երբ իրադրությունն այնպիսին էր, որ արվեստի մասին մտածելու հնարավորություն չկար, այդ ժամանակ կառավարական մարմինների որոշմամբ «Արամ Խաչատրյան» սրահն ի տնօրինություն հանձնվեց իրավիրյալ մի երաժշտի: Նա սկսեց շատ համեստ, բայց ավարտեց նրանով, որ սրահում գործող բոլոր կոլեկտիվներին այդտեղից դուրս հանեց:

– Այդ մարդը գեղարվեստական ոչ մի կապ չունի հայկական մշակույթի հետ, իսկ երաժշտության բնագավառում ես նրա մասին բարձր կարծիք չունեմ, – պատմում է Օրփենյանը, **– բայց ասում են, որ նա վատ բիզնեսմեն չէ:**

Այն, ինչ վերջին տարիներին տեղի էր ունենում «Արամ Խաչատրյան» համերգաբաղնում, մեծ մասամբ առանձնանում էր վատ ճաշակով և ցածր պրոֆեսիոնալիզմով: Իմ աշխատասենյակի մուտքի դիմաց պատ շարվեց: Նվագախմբի շատ թանկարժեք գործիքներ ու սարքավորումներ բառիս բուն իմաստով ոստիկանության օգնությամբ փողոց էին ուզում հանել: Հարցը լուծելու իմ բոլոր փորձերն ապարդյուն անցան: Ավելին՝ նա ցանկություն ուներ տիրանալու պետական կոնսերվատորիային, օպերայի շենքին, ուզում էր քայքայել նույնիսկ Հայաստանի պետական երգչախումբը: Նա պատրաստ էր ամեն ինչ կործանել, խորտակել՝ հանուն իր անձնականի: Ես հայտարարեցի, որ քանի դեռ դաշիվը

կգտնվի մի մարդու ձեռքին, ես այդտեղ ոտք չեմ դնի, ես օպերայի դահլիճում հրաժեշտի համերգներ տալով՝ թողեցի նվագախումբը:

Օրփենյանի պատմածն իրոք իրավիրյալ մի մարդու՝ Լորիս Եզնավորյանի մասին է, որի ձեռքը նշված արարքների համար ոչ ոք չբռնեց: Ավելին՝ ոչ կառավարական մարմիններում, ոչ մշակույթի նախարարությունում թիկունք չկանգնեցին մի մարդու, որը խոր հետք է թողել հայ երաժշտության պատմության անդամատանում, հայ էստրադային արվեստը մոտ չորս տասնամյակ պահել բարձր մակարդակի վրա, նրա փառքը տարածել համայն աշխարհում:

Կոնստանտին Օրփենյանը մեծ բարեկամսեր ու հայրենասեր է, ամուր արձաններով կապված իր Հայաստանին, իր Ջանգեզուրին, իր հայրական գյուղ Տաթևին:

Չորս-հինգ տարի լինելով արտերկրում, մասնավորապես Ամերիկայում, ելույթներ է ունեցել մեծ նվագախմբերի հետ, մասնակցել ջազային փառատոների: Ընտրվել է Կալիֆոռնիայում գործող կրթության և արվեստի միջազգային ակադեմիայի իսկական անդամ: Ստեղծագործական նվաճումների համար արժանացել է էյնշտեյնի անվան ոսկե մեծ մեդալի:

Այսքան նվաճումներից հետո եղել են նաև առաջարկներ, որպեսզի մալետրոն իր մասկված բնակություն հաստատի ԱՄՆ-ում, բայց Օրփենյանը կտրուկ հրաժարվել է, միշտ հպարտորեն հայտարարելով.

– Ես Հայաստանի քաղաքացի եմ և ընդմիտս կմնամ այդպիսին: Ես զանգեզուրցի եմ: Օրփենյան տոհմը շատ հայտնի է և սերտորեն կապված է Ջանգեզուրի, մասնավորապես Տաթևի հետ: Ես շատ եմ հպարտանում, որ շառավիղն եմ Ստեփանոս Օրփենյանի, նաև՝ Դավիթ Բեկի:

Նվագախմբի հետ անընդհատ ուղեւորությունների մեջ լինելով, բազմաթիվ հասարակական աշխատանքներ կատարելով հանդերձ, Օրփենյանը ժամանակ էր գտնում ամեն տարի այցելել հայրենի քաղաքը, գյուղը, հանդիպել իր հայրենակիցների հետ: Նա մի շարք ստեղծագործություններ է նվիրել հարազատ եզերքին, նրա մարդկանց: Դրանցից են «Ջանգեզուր» սիմֆոնիկ պոեմը, որն առաջին անգամ կատարվեց համահյուսակցական ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբի կողմից, Գորիսի մասին՝ «Դու սարերի շուշան ես» և «Ով Գորիսը չի տեսել, չի տեսել աշխարհ» երգերը:

Օրփենյան մարդու և քաղաքացու ու նրա ստեղծագործությունների մասին իրենց հիացմունքն ու կարծիքն են արտահայտել նշանավոր կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանը, Տիգրան Սիմոնյանը, Սողոմոն Սեդրյոյը, Բոգոսլավսկին, Կոլմանովսկին և ուրիշներ: Իսկ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդուարդ Միրզոյանը մի առիթով ասաց.

– Օրփենյանը մեծ տաղանդի կոմպոզիտոր է: Հիմնալի մարդ է և մեծ հայրենասեր: Նրա մեջ բարձր է պատասխանատվության զգացումը, պահանջկոտությունը ստանձնած գործի, իր ու կոլեկտիվի անդամների նկատմամբ: Այս բոլորը, զուգակցելով իրար, դարձել են նվագախմբի հաջողության գրավականը:

Ալեքսանդր Աճեմյան. «Ջարմանում եմ, թե որտեղից այդքան եռանդ մեր Կոստիկին. ստեղծագործում է, տառապում նվագախմբում, հասարակական գործունեություն ծավալում, ե՞րբ է հասցնում»:

Անոն Բարսեղյան. «Ինձ համարում են բեղմնավոր երգահան, բայց մեր կոմպոզիտորական ընտանիքում ամենաբեղմնավորը Կոնստանտին Օրփենյանն է... Նրա միջոցով են մեր շատ երգեր դուրս եկել Հայաստանի սահմաններից»:

ՀԱՕԿ-ի ներկայացուցչության խորհրդի անդրանիկ Նիսպը

Սարգսյան

2013թ. նոյեմբերի 1-ից Կապանում գործում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի (ՀԱՕԿ) ներկայացուցչությունը՝ 3-րդը հանրապետությունում: Մինչ այդ նման կառույցներ գործում էին Գյումրիում և Վանաձորում: Ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀԱՕԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչության խորհրդի անդրանիկ Նիսպը, որին մասնակցում էր ՀԱՕԿ-ի պատվիրակությունը՝ կոմիտեի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանի գլխավորությամբ: Նիսպը ներկա էին նաև մարզի քաղաքային համայնքների ղեկավարներ, մարզադպրոցների տնօրեններ, հանրակրթական դպրոցների ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, սպորտային ոլորտի ներկայացուցիչներ:

ՀԱՕԿ-ի Սյունիքի ներկայացուցչության տնօրեն Արշաակ Սարգսյանը հակիրճ ներկայացրեց նախ ՀԱՕԿ-ի մարզային ներկայացուցչության նպատակներն ու խնդիրները, կարգավիճակը, կանոնադրական ակտերն ու օրենքները, որով ղեկավարվում է ներկայացուցչությունը, մասնավորապես շեշտելով, որ ներկայացուցչությունը միջոցներ է ձեռնարկելու՝ ուղղված մարզի հավաքական թիմերի և առանձին մարզիկների նախապատրաստմանը և հանրապետական, միջազգային մրցումների և օլիմպիական խաղերի մասնակցությանը, ինչպես նաև սատարելու է մարզում առողջ ապրելակերպի արմատավորմանը, օլիմպիական գաղափարների տարածմանը, մարզական բազմաբնույթ միջոցառումների կազմակերպմանը: Այս խոսքով, մարզական Մոր շունչ է հաղորդելու մարզի համայնքներին:

ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանը մասնավորապես իր խոսքում նշեց, որ սպորտի ոլորտում համակարգված աշխատանքը բացակայում է. «Նույնը կարող են ասել նաև Սյունիքի մարզի



վերաբերյալ: Մենք ունենք տաղանդաշատ մարզիկ-մարզիչներ, որոնցից շատերի հետ շփվել ենք, սակայն ինչ-ինչ պատճառներով նրանք հանրապետության հավաքական թիմերում չեն ընդգրկվում: Դրա համար կան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառներից առաջինը՝ չկա համապատասխան մարզագույք, մարզումային պայմանները բավարար չեն, երկրորդ՝ մարզը հեռու է մայրաքաղաքից, և շնորհաշատ մարզիկները վրիպում են մեր տեսադաշտից: Հենց այս խնդիրները հակված ենք լուծելու ՀԱՕԿ-ի մարզային ներկայացուցչության միջոցով: Ոլորտի առջև ծառայած խնդիրները լուծելու համար Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն կունկրտ քայլեր է ձեռնարկում. հոկտեմբերին Սիսիանում շահագործման կհանձնվի բազմաֆունկցիոնալ մարզադպրոց: ՀԱՕԿ-ը մարզային ներկայացուցչությունների առաջարկներով տարբեր համայնքներում պատրաստ է սկսել լայնածավալ շինարարություն՝ միտված սպորտի զարգացմանը: Բացի այդ, մարզում գործում են տարբեր մարզային սպորտային ֆեդերացիաներ, որոնք հանրապետական ֆեդերացիայից անջատ են գործում: Մեր նպատակն է սերտացնել կապը և ապահովել տաղան-


Կեղծ արժեքներն իմ քաղաքում հարգի չեն

ՍԿԻՔԸ ԷՏ 1

Սակայն, քննախույզ զսպվածությամբ և ինքնամփոփ չորությամբ շարված, արժանապատվություն աղաղակող իր կեցվածքով, գորիսեցին, ասես, կանխավ փորձ է անում թեթևաուլիկ այլասերումներից զերծ պահել հովվերգական պարզությամբ շնչող իր անզուգական հուզաշխարհն ու կասկածելի տարակարծություններից հեռու պահել լրջաբար, զտարյուն արժեքներին ապավինած իր անկաշառ հոգին:

Աշխարհին Ակսել Բակունց, Գոսսան Աշոտ, Սերո Խանգաղյան և շատ այլ նշանավոր դեմքեր տված Գորիսն իրողություններն արժեքներ լին երեւի թե՛ օրինաչափ է, որ պիտի չնահավան լինի, որովհետև մեծերը նրա կյանքում տարաշխարհիկ առեղծվածի հեռավորության վրա չեն գտնվել, այլ նրա առօրեական կյանքի մի մասն են կազմել: Սովորականի մեջ արտասովորը, իսկ արտառոցի մեջ սովորականը տեսնող ու զանազանող գորիսեցուն թուղցիկ, անբովանդակ, չկայացած էժան բաներով դժվար է զարմացնել: Նրան հիրավի զարմացնել, կամ ավելի ճիշտ, հիացնել կարող են միայն կատարյալ, անխառն, անեղծ ու անկեղծ բաները...

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



դաշատ մարզիկ-մարզիչների մասնակցությունը հանրապետական և միջազգային մրցումներին»:

Սյունիքի մարզի ՀԱՕԿ-ի ներկայացուցչության կանոնադրությունը հաստատելուց հետո միաձայն ՀՀ Սյունիքի մարզի ՀԱՕԿ-ի ներկայացուցչության խորհրդի նախագահ ընտրվեց Աժ պատգամավոր Մերուժան Սիմոնյանը: Խորհրդի կազմում ընդգրկվեցին Կապանի, Սիսիանի, Քաջարանի և Ագարակի քաղաքապետեր Աշոտ Հայրապետյանը, Աղասի Հակոբջանյանը, Վարդան Գեւորգյանը, Մխիթար Ջաքարյանը, Կապանի ԲՀԿ տարածքային կազմակերպության նախագահ Արթուր Մարտիրոսյանը, Կապանի և Քաջարանի մարզադպրոցի տնօրենները, Կապանի պատվավոր քաղաքացի, հայկական ֆուտբոլի երախտավոր Գրիշա Հանքարծույանը: Մերուժան Սիմոնյանը շնորհակալություն հայտնելով վստահության համար, համոզմունք հայտնեց, որ ներկայացուցչությունը ջանք չի խնայի երիտասարդության շրջանում բարոյաժողովրդական առողջ ապրելակերպի արմատավորմանը և զարգացմանը, իսկ ներկայացուցչության խորհրդի կազմին մաղթեց բեղմնավոր աշխատանք:

Սյունիքի մարզ կատարած այցի երկրորդ օրը ՀԱՕԿ-ի պատվիրակությունը ծանոթացավ Քաջարանի և Կապանի մարզական ենթակառուցվածքներին: Ինչպես նշեց Հրաչյա Ռոստոմյանը, մարզադպրոցների վիճակը բարվոք է, սակայն կան անելիքներ, և առաջիկայում հնարավորության սահմաններում կլուծվեն առկա խնդիրները: Մասնավորապես, ամմիթիթար վիճակում է Կապանի Դավիթ Հանքարծույանի անվան մարզադպրոցի մարզադահլիճի հատակը, ինչը խոչընդոտում է լիարժեք պարապմունքներ անցկացնելուն:

Նիսպը ներկա էր ըմբռնարտի աշխարհի նախկին չեմպիոն, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ՀԱՕԿ-ի ներկայացուցչությունների բաժնի պետ Վաղինակ Գալստյանը, ով բարձր գնահատեց մարզի սպորտային ներուժը և համոզմունք հայտնեց, որ առաջիկայում այն կկրկնապատկվի:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏ, «ԶԱՆԳԵՉՈՒՐ» ԹԵՐԹԻ ԱՐԽԻՎ

...ԵՆ գրոհում է գումարդակը

Առաջին հայացքից դժվարաճանաչ դեմքեր: Չինվորական կեպին ու համազգեստը նրանց կեցվածքին խրոխտություն են հաղորդել. առնականության տարրը գատիչ է: Քիչ զննելուց ճանաչում ես նրանց: Ծանոթ, հարազատ դեմքեր, որ օրը հազար անգամ անցել ենք միմյանց մոտով ու մեկնեկու գիտենք հինգ մատի պես, թեև բարեւ ու բարի լույս չի եղել: Իսկ այստեղ արդեն միմյանց ժպտում ենք հազար տարվա ծանոթի պես: Ժամապահը թեև լավ գիտի մեզ, բայց կարգ է՝ զեկուցում է հրամանատարին: Հրամանատարն էլ քաջածանոթ է՝ Սուրիկ Սերյոժայի հաջատրյան:

Հրամանատարի աշխատանքակերտ ցուրտ է: Մարդիկ բաժկոններով են: Պատին Անդրանիկ զորավարի մեծադիր նկարն է, որ զնազող-եկորին ասես բարի գալուստ ու ճամփա է մաղթում՝ լուսավոր ժպիտով: Եվ ժպիտը, որպես թախսման, զինվորը կռվի դաշտ է տանում, եւ թշնամին դառնում է հեշտ խոցելի, չնայած զինված է մինչեւ ատամները:

Սուրիկ հաջատրյանն այս տարվա օգոստոսից Գորիսի շրջանի ինքնապաշտպանության գումարտակի հրամանատարն է: Գումարտակի ստեղծումը ժամանակի ծնունդ է՝ հրամայական լինելու ամենախստագույն աստիճանով, քանզի ժամանակը պետք ունի սրբագործության եւ պահը պատասխանատու է: Իրենապակասության որոշակի ու ընդգծված տարրերի կարիքը կա: Իսկ հակառակ դեպքում արդեն գալիք սերունդը չի մերի:

Մեր ժողովուրդը, որ հազարամյակների ճամփա է անցել, ինչպես ամեն վտանգի ժամանակ, հիմա էլ երիտասարդացել է, նահանջելու տեղ չկա: Անարդար ժամանակը ծնկի բերելու պահն է: Եւ հայ ժողովրդի ընտրանին ռազմի դաշտում է: Եւ նրանք ապացուցում են, որ անցել է այն ժամանակը, երբ օտարների դրոշի տակ էինք կռվում ու հերոսանում: Հիմա սեփական դրոշի, եռագույնի հովանու տակ կռվելու ժամանակ է: Եւ կռվում են: Փույթ չէ, որ նրանք հազարներ չեն: Գումարտակում այս տղաներին միավորել է լեռնաշխարհի շահը, նրա ապագան: Գորիսը եղել ու մնում է ռազմավարական նշանակության հենակետ, իսկ ամենից առաջ՝ Հայրենիք: Նրա մեկ սանտիմետրի կորուստն անգամ հավասարազոր է Հայաստանի սրտի տակ ատոմային ռումբ դնելուն: Գիտակցել այս ամենը, նշանակում է նաեւ հաղթանակի կենդ կռել: Քաջագուն տղերք են գումարտակին զինվորագրվածները: Նրանց ֆիդայու, ինչպես ժողովուրդն է ասում, հազուստը չի հրապուրել: Նրանց զինվորագրել է, միավորել հայրենիքի սերը, նրա անկախու-

թյան, ազատության գաղափարը: Եւ ապացուցում են, որ անարժեք է մի ժողովուրդ, եթե նրա հոգում վարար գետի պես չի հորդում հայրենասիրությունը: Հրամանատարն էլ նախկինում զինվորական չէր: Նրան էլ այստեղ է բերել հայրենիքի վրա կախված վտանգը, եւ փորձել է իր ուժերի, հնարավորությունների սահմաններում նպաստ բերել վտանգված հայրենիքին:

Շատ չեն գումարտակին զինվորագրվածները:

– Եթե նոր երիտասարդներ ես ցանկանան անդամագրվել մեր կազմավորմանը, հնարավորություն ունենք, – ասում է հրամանատարը:

– Յուրաքանչյուր ցանկացողի առջեւ բա՞ց են գումարտակի դռները, – հարցնում ենք:

– Ո՛չ: Այստեղ արդեն գործում է վերապահման օրենքը, որն ինքնուրույն պատճենում է ֆիզիկական, մարտական անհրաժեշտ պատրաստականություն չունեցող երիտասարդների մուտքը գումարտակ: Մեզ պետք են արի, հերոս, փոթորիկ տղերք, քանզի զենքը պետք է ուժեղի, համարձակի ձեռքում լինի, որ այն խոսի իր ողջ գործյամբ, թե չէ զենքն ինչքան արդիական եւ հուժկու լինի, վախկոտի ձեռքում այն արդեն չի կռվում է հավասար:

Գումարտակի ոգին, նրա շարժիչ ուժը մեծ թվով մեր այն տղերքն են, որ արդեն չորս տարի է կռվում են, – շարունակում է Ս. Խաչատրյանը:

Հրետամավոր Սամվել Աղաջանյան: Նրա ձեռագիրը թուրքն էլ ճանաչում է: Կգա ժամանակը, եւ Սամվելին, ինչպես նաեւ Մարատ Աթաբեկյանին, Վլադիկ Ստեփանյանին, Արամ Ավանեսյանին, Սանասար Բեգլարյանին ժողովուրդը դափնիներ կնվիրի: Նրանք արժանի են դրան: Եւ թող օրինվեն նրանց ծնող մայրերը, որ Գորիսին նման զավակներ են պարգևել:

Վերջին ժամանակներս Գորիսն անընդհատ հրետակոծվում էր: Գումարտակի մարտիկներն առաջադրանք ստացան լռեցնել թշնամու կրակակետը: Հոկտեմբերի 31-ն էր: Ժամը մոտավորապես 22-ը: Արկերը դարձյալ թռչում էին Գորիսի վրա, իսկ մի մեծ հոսք՝ քաղաքի հիմնգերբորդ թաղամասի վրա: Գորիսեցիներս արդեն սովոր ենք «Գրադից» արձակված արկերը հաշվելու: Այս անգամ թշնամին հասցրեց 40 արկ թափել քաղաքի վրա: Ամբիջապես հետեւեց մեր տղաների հուժկու հակազորի: Թշնամին լռեց...

Իսկ մենք «Ձանգեզուրի» հաղորդման մեջ, ինչպես ընդունված է, ընդամենը մի կարճ տող գրեցինք՝ թշնամին ստացավ արժանի հակահարված: Այդ մի տողի համար տղերքը մի ողջ օր կռվել են: Հաշվի առնենք նաեւ տեղանքը: Թշնամու կրակակետը գտնվում էր ձորում: Այդտեղ հասնելու համար նախ եւ առաջ պետք էր մի բարձունք մագլցել, այնուհետեւ բարձունքն էլ վար իջնել: Իսկ իջնելը լեցուն էր բազում վտանգներով, վիրավորներով: Խելացի ձեռով կազմված հարձակման պլանի շնորհիվ գումարտակին հաջողվեց առանց որեւէ կորստի լռեցնել թշնամու հզոր կրակակետը: Իսկ այդտեղ թշնամին ուներ չորս տանկ, մեծ քանակությամբ հետեւակ, հրետանի: Մեր տղերքը միայն ավտոմատով նրանց հարցեցին:

Կանցնի ժամանակը: Եվ նույն ժամանակն էլ երեւի իրավունք կվերապահի ավելի մանրամասը եւ բարձրաձայն խոսել հայ ազատամարտիկների մղած

ճակատամարտերի մասին: Եւ այն ժամանակ բոլորը կհիմանան նաեւ գումարտակի հերոսական կռվի մասին, որ նա մղեց հոկտեմբերի 31-ին: Իսկ դա եզակի էջ չէ գումարտակի մարտական տարեգրության մեջ: Այդպիսի մարտեր նա բազում անգամ է մղել:

– Դիրքեր գրավելը մեզ համար հեշտ է, – ասում է հրամանատարը:

– Խնդիրը դրանք ամրացնելու, առաջավոր գծի եւ թիկունքի միջեւ մշտադրոն կապ, հաղորդակցություն ապահովելու մեջ է: Այս շիտարարված պատերազմը ցույց տվեց, որ հարձակմանը զուգահեռ կարելի էր մնալ պաշտպանության դերը: Դիրքերը գրավելով՝ գումարտակի հարվածային թեւն անընդհատ առաջ է շարժվում: Այս պարագայում պետք է այնքան ուժ ու հնարավորություն ունենալ, որ կարողանանք պահել գրաված դիրքերը: Ահա ինչու, օգտվելով առիթից, ուզում են գորիսեցիներին ասել՝ ում համար թանկ է Գորիսը, համեցեք մեզ մոտ: Մենք քաջ տղաների կարիք ենք զգում: Ո՛վ պետք է պաշտպանի մեր երեխաների, մայրերի, կանանց անդորրը, արժանապատվությունը, եթե ոչ մենք: Ուրիշի համար չենք կռվում: Մեզ համար ենք կռվում:

Թուրք գերիներից մեկը պատմում էր. «Բանակ չգորակոչելու համար ինձնից 150 հազար ռ. պահանջեցին: Չտվեցի: Չունեի, որտեղի՞ց տայի: Դրա համար էլ ինձ կռվի դաշտ ուղարկեցին»: Փառք Աստծո, գումարտակին անդամագրվածների մոտ իշխում է կամավորության սկզբունքը: Եւ հուսանք, որ կամավորությունը վիրուսի նման կտարածվի ողջ Գորիսով մեկ: Այն ժամանակ մենք գրաված դիրքերը պահելու համար կրախի առջեւ չենք կանգնի: Միեւնույն դիրքի համար հազար անգամ չենք կռվի:

– Վերջին ժամանակներս Գորիսի երկնակամարում հաճախ են հայտնվում թշնամու «ՍՈՒ-25» ռմբակոծիչներ: Չգիտես, սա ծա՛ղր է մեր հանդեպ, ծիծաղելու նոտա՞՞ է դա, թե՞ ահաբեկչության դրոշմորում: Մի՞թե հնարավոր չէ մեր օդային տարածքն անվտանգ դարձնել, զերծ պահել թշնամու խուժումներից, – հարցնում են գրուցակցիս:

– Հիմա շրջանում ամեն ինչ արվում է նման ոտնձգություններին արժանի հակահարված տալու համար, – ասում է հրամանատարը:

Զրույցն ընդհատում է ոտքից վիրավոր, հեմակներով, երիտասարդ մի զինվոր՝ Արայիկ Մելքունյանը: Երեւանում է բնակվում: Սակայն ծնվել է Գորիսում: Լսելով, որ ծննդավայրն ազերիների հրետակոծության թիրախ է դարձել, շտապել է Գորիս, շտապել մասնակցելու նրա պաշտպանությանը: Ես ծառայում եմ պետական միավորումում, ջոկատի հրամանատար եմ: Սակայն բազում հարցերում Սուրիկ հաջատրյանի օգնությամբ եմ դիմել եւ միշտ պատրաստակամ օգնել է: Ասես մերժելը նրա էության մեջ չկա, եթե հարցը վերաբերում է պաշտպանությանը:

Գորիսում գորիսեցի միտի կռվի: Ծայրահեղություն չհամարեք իմ ասածը, որովհետեւ գորիսեցի ավելի լավ գիտի տեղանքը, նրան ծանոթ են բոլոր անցքերն ու կածանները:

Եւ եթե մենք վիրավորներ, զոհեր ենք տալիս, ապա դա նաեւ տեղանքը չի մանավառ արդյունք է:

Գնում ենք Երեւան, հանգստանալուց հետո վերստին Գորիս կգանք:

Եւ գնաց Արայիկը՝ հեմակներով:



Զինվորի գնալուց հետո մի պահ լռություն իջավ: Ո՞րն է մեր լինելիության ակունքը, որտե՞ղ է մեր ուժը: Նաեւ Արայիկի ու նրա նման զինվորների մեջ: Մեր լինելիության արմատը նրանց նմանների մեջ է, որ տղամարդավարի զոհաբերվել գիտեն: Եվ տղամարդավարի գումարտակից զոհվեցին Լեւոն Պետրոսյանը, Աշոտ Միրզոյանը, Սեդիկ Հակոբյանը:

Գոյություն քարշ տալը խորթ էր նրանց հոգուն: Նրանք մոռացած իրենց, համուն հայրենի կռվի դաշտ մեկնեցին, մեկնեցին ու հերոսացան: Հերոսացան եւ ապացուցեցին, որ զոհաբերվել կարող է միայն քաջը, որ ռազմի դաշտը վախկոտների տեղ չէ: Եւ այսօր գումարտակի տղերքը կռվում են նաեւ նրանց փոխարեն՝ մեր ինքնապաշտպանությունը դնելով ամուր հիմքերի վրա՝ թշնամուց խլելով նրա տեխնիկան՝ տանկեր, թնդանոթներ, ոչնչացնելով «Գրադ» կայանքներ եւ այլն:

Ահա այսպիսի ռազմավար է գրանցվել գումարտակի անվան դիմաց: Արդեն առիթ ունեցանք ասելու, որ գումարտակի միջուկը կամավորականներ են: Սակայն նրանց մեջ քիչ չեն նաեւ այն երիտասարդները, ովքեր վարժապետների կողմից շրջանային զինվորական կոմիսարի կողմից են նրանց, բնականաբար, վարժեցնել, սովորեցնել, ուսուցանել է պետք: Չէ՞ որ գործ ունենք ժամանակակից զենքի, տեխնիկայի հետ: Եւ խնդիրն այդ նույնպես լուծվում է գումարտակում:

Այստեղ՝ հենց տեղում, պատրաստում են տանկիստներ, հրետանավորներ, որ տանկը, հրանոթը գործադրելու համար վիզ չթեքեն ուրիշների առջեւ:

Սուրիկ Բաղդասարյանը գորիսեցի կռվողների մեջ «ստարիկների» շարքին է դասվում: Նա հիմա հրամանատարի տեղակալն է:

– Ժողովուրդը հիանալի նախաձեռնություն է հանդես բերել՝ դիրքերում կանգնած մարտիկներին տանում է ծխախոտ, սննդամթերք, տաք զուլպաներ, հագուստ, – ասում է հրամանատարի տեղակալը: – Հարցը մի տուփ ծխախո-

տը չէ: Հարցն այն է, որ զինվորը թիկունքին զգում է ժողովրդի ջերմ շունչը, զգում է, որ մենակ չէ, ողջ ժողովուրդն իր հետ է: Դրանից է նա ոգեւորվում է, գոտեպնդվում: Մեզ համար հասկանալի չէ, թե ինչպես, ինչ նպատակով է օգտագործվում քաղաքում պաշտպանության նպատակով հանգանակված գումարը: Իսկ այդ անորոշությունն այդպես էլ չի պարզվում:

Ավտոտրանսպորտ ունեցող որոշ հիմնարկ - ձեռնարկություններ թաքցնում են պետական մեքենաները: Դրա պատասխանն էլ կա՝ զոհացել են: Վատ չէ մտածված: Եւ վայ այն ազգին, որ նմանները կան նրա շարքերում: Սա արդեն դանդաղ մահ է: Հետաքրքիր է, նմանների համար, երբ է սկսվելու հայրենասիրության ժամը: Եւ դեռ հարց է, կսկսվի՞:

Պատերազմը կվերջանա: Հայոց հողում խաղաղություն կիջնի: Նմաններն ի՞նչ երեսով պիտի նայեն ժողովրդին եւ ապրեն նրա հետ: Իսկ որ գումարտակի ճակատը բաց է, դրանում ոչ մի խոսք:

Նա արդեն իր հրամանատարի հետ դարձել է մի կուռ կոլեկտիվ, որի նշանաբանն են Գ. Նժդեհի հետեւյալ խոսքերը. «Հայրենասիրության հետ բարձրանում են ազգերը, ընկնում նրա հետ: Փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պիտի լինեն, քան մեծերը: Մենք, ավելի քան բոլորը, հայրենապաշտ պիտի լինե՞նք»:

Եւ հայրենապաշտ է գումարտակի հրամանատարը, եւ այդպիսիք են նրա զինվորները, որ սովորել են ապավինել սեփական ուժին: Իսկ սեփական ուժն ահել փոթորկի հզորություն ունի: Եւ փոթորկի պես գրոհում է գումարտակը: Եւ վերստին հիշում են Նժդեհի խոսքերը. «Միեւնույն ժողովուրդը, բանակը՝ նայած իր ղեկավարների, կարող է եւ հրաջգործություններ կատարել, եւ խայտառակորեն ծնկի գալ հակառակորդի առաջ»:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ
«Ձանգեզուր», 1 դեկտեմբերի 1992թ.

20 տարի առաջ



Հրադադարի մասին պայմանագիր

Ոչ պաշտոնական քարգնանություն

ՌԴ պաշտպանության նախարար Պ.Ս.Գրաչովին

ՌԴ արտաքին գործերի նախարար Ա.Կ.Կոզլովին

Վ. Ն. Կազիմիրովին

Արձագանքելով 1994 թվականի մայիսի 5-ի Բիշքեկի արձանագրության մեջ նշված հրադադարի կոչին և հենվելով 1994 թվականի փետրվարի 18-ի Արձանագրության վրա՝ հակամարտող կողմերը համաձայնեցին հետեյալի մասին.

1. Ապահովել կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցումը՝ սկսած 1994 թվականի մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից: Մինչև ոչ ուշ, քան 1994 թվականի մայիսի 11-ը հրադադարի մասին համապատասխան հրամանները կտրվեն և կհաղորդվեն ռազմական ստորաբաժանումների հրամանատարներին, որոնք պատասխանատու են դրանց իրականացման համար: Մայիսի 12-ին՝ մինչև ժամը 23.00, Կողմերը կփոխանակեն հրադադարի մասին իրենց հրամանների տեքստերը՝ դրանց հնարավոր փոխադարձ լրացման և հետագայում համանման փաստաթղթերի հիմնական դրոյթների ներդաշնակեցման նպատակով:

2. Խնդրել Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարին՝ Մոսկվայում, մինչև ոչ ուշ, քան ս.թ. մայիսի 12-ը Ադրբեջանի, Հայաստանի պաշտպանության նախարարներին ու Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատարի մասնակցությամբ հրատապ հանդիպում հրավիրելու՝ նպատակ ունենալով համաձայնեցնել զորքերի բաժանման եզրագծերը, այլ հրատապ ռազմատեխնիկական հարցեր, ինչպես նաև նախապատրաստել միջազգային դիտորդների առաջավոր խմբի տեղակայումը:

3. Սույն պայմանավորվածությունը կօգտագործվի առաջիկա 10 օրվա ընթացքում բանակցություններն ավարտելու և մինչև ոչ ուշ, քան ս.թ. մայիսի 22-ը զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնագիր կնքելու համար:

4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ կմտնի անմիջապես այն պահից հետո, երբ Միջնորդը տեղեկացնի, որ նա ստացել է հակամարտող ուժերի կողմից լիովին նույնական փաստաթղթեր՝ ստորագրված լիազոր ներկայացուցիչների կողմից:

Ադրբեջանի պաշտպանության նախարար
Հայաստանի պաշտպանության նախարար
Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատար

Նշում. տեքստը ստորագրել են համապատասխանաբար Մ.Մամեդովը՝ 1994 թվականի մայիսի 9-ին Բաքվում, Ս.Սարգսյանը՝ մայիսի 10-ին Երեւանում, Ս.Բաբայանը՝ մայիսի 11-ին Ստեփանակերտում:

Բիշքեկյան արձանագրություն

ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովի, Ղրղզստանի Հանրապետության խորհրդարանի, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի և Արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ 1994 թվականի մայիսի 4-5-ը Բիշքեկ քաղաքում անցկացված հանդիպման մասնակիցները.

■ վճռակառույցում արտահայտեցին ամենայն կերպ օժանդակել Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջը զինված հակամարտության դադարեցմանը, որը ոչ միայն անուղղելի վնաս է հասցնում ադրբեջանական և հայ ժողովուրդներին, այլև Եակամորեն շրջափում է տարածաշրջանի մյուս երկրների շահերը, լրջորեն բարդացնում միջազգային իրավիճակը.

■ պաշտպանելով ԱՊՀ պետությունների ղեկավարների 1994 թվականի ապրիլի 15-ի խորհրդի հայտարարությունը, պատրաստակա մոլություն հայտնեցին լրիվ աջակցություն ցուցաբերել զինված դիմակայության դադարեցմանը և նրա հետեւանքների վերացմանն ուղղված գործադիր իշխանության ներկայացուցիչներին

ու ղեկավարների ջանքերին՝ համապատասխան համաձայնագրի շուտափույթ կնքման միջոցով.

■ հանդես եկան հակամարտության դադարեցման գործում Համագործակցության և Միջխորհրդարանական վեհաժողովի բնական ակտիվ դերի, դրա հետ կապված ՄԱԿ-ի և ԵԱՀԿ սկզբունքների, նպատակների և կոնկրետ խնդիրների իրագործման օգտին /ամենից առաջ Անվտանգության խորհրդի 822, 853, 874, 884 բանաձեւեր/,

■ կոչ արեցին բոլոր հակամարտող կողմերին լսել ողջախիռության ծայրը. մայիսի 8-ի լույս 9-ի կեսգիշերին դադարեցնել կրակը՝ հիմնվելով 1994 թվականի փետրվարի 18-ի արձանագրության վրա /այդ թվում և դիտորդների տեղակայման մասով/, և արդյունավետ աշխատանքով սեղմ օրերի ընթացքում այն անրապնդել հուսալի, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագրի ստորագրման միջոցով, որը նախատեսում է ռազմական և թշնամական գործողությունները չվերսկսելու ապահովման մեխանիզմ, գրավված տարածքներից զորքերի դուրս բերում և հաղորդակցման ուղիների գործունեության վերականգնում, փախստականների վերադարձ,

■ համաձայնվեցին առաջարկել ԱՊՀ անդամ պետությունների խորհրդարաններին՝ քննարկել Միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի

նախագահ Վ.Ֆ. Շունեյկոյի և վեհաժողովի խաղաղարար խմբի ղեկավար Մ.Շ.Շերիմկուլովի նախաձեռնությունը Համագործակցության խաղաղարար ուժերի ստեղծման մասին,

■ նպատակահարմար գտան շարունակել նման հանդիպումները՝ ի շահ զինված հակամարտությունների խաղաղ լուծման,

■ երախտագիտություն հայտնեցին Ղրղզստանի ժողովրդին և ղեկավարությանը՝ աշխատանքի համար հիմնալի պայմաններ ստեղծելու, սրտաբացության և հյուրընկալության համար:

Պատվիրակությունների անունից՝

Ա.Ջալիլով/Ռ.Գուլիելի ստորագրությունը/

Կ.Բաբուրյան

Բ.Արաբջյան

Վ.Շունեյկո

Մ.Շերիմկուլով

Վ.Կազիմիրով /Ռուսաստանի Դաշնության

նախագահի լիազոր ներկայացուցիչ,

Ռուսաստանի միջնորդական առաքելության

ղեկավար/

Մ.Կրտավ /ԱՊՀ անդամ-պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի քարտուղարության ղեկավար/

Բիշքեկ
5 մայիսի 1994թ.

Ինչպե՛ս կայացավ Բիշքեկյան հանդիպումը

ՍԿԻՋԲԸ ԷՏ 2

վագույն դեպքում գործում էին մեկ շաբաթվա կտրվածքով: Ըստ որում՝ հրադադարի ռեժիմը գլխավորապես խախտվում էր Ադրբեջանի կողմից, ինչի մասին այսօր հիշում են և միջնորդները:

Պարոն Ղուլյանը նշեց, որ խաղաղության գործընթացն այն տարիներին իր ա կ ա ն ա գ լ ու մ էր Ռուսաստանի և ԵԱՀԿ-ի կողմից: Խաղաղարար առաքելության մեջ աջակցում էր նաև ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը, որի պատվիրակությունները հաճախ էին այցելում Ստեփանակերտ: 1994թ. մայիսի սկզբներին ռազմագործողությունները փաստացի լիովին տեղափոխվել էին հակառակորդի տարածքները և Արցախի շուրջ ստեղծվել էր անվտանգության գոտի: Սակայն անհաջող ռազմագործողություններում կրած ծանր պարտությունները բարոյալքել էին ադրբեջանական զինված ուժերին, ջլատել: Ու, չնայած զինադադարի փաստաթղթի վերաբերյալ պայմանագրի ստորագրումն անհրաժեշտ էր և Ադրբեջանին, սակայն Բաքվի իշխանություններին կարծես «համարձակությունը» չէր հերիքում դիմել միջազգային կազմակերպություններին: Ինչպես ասում են, «դանակը ոսկորին հասավ» այն ժամանակ, երբ Արցախի պաշտպանական բանակը, շարունակելով իր հաղթարշավը, հակառակորդին ստիպեց հաշվի մատել իրողության հետ: Եվ Բաքուն, ահաբեկված հայկական ուժերի առաջխաղացման մտադրությունից, ի վերջո սկսեց միջնորդներ որոնել:

Պարզվում է, որ հրադադարի ձեռքբերման վերաբերյալ 1994թ. փետրվարին փորձ էր արվել Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարությունների ղեկավարների ու ԼՂՀ ՊԲ ներկայացուցչի՝ Մոսկվայում կայացած համաձայնագրի մասին, սակայն որերորդ անգամ ադրբեջանցիների մեղքով պայմանավորվածությունը խախտվել էր: Այնուամենայնիվ, Մոսկվայի ճնշմամբ հաջողվեց Ադրբեջանին ստիպել մատելու բանակցությունների սեղանի շուրջ: «Ապրիլի 15-ին տեղի էր ունեցել ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների միտքը, որտեղ ընդունված հայտարարությամբ հակամարտության կողմերին կոչ էր արվում սեղմ ժամկետում դադարեցնել ռազմագործողությունները և հաստատել զինադադարի ռեժիմ, - պատմում է Ա.Ղուլյանը: - Դրանից հետո վեհաժողովն ավելի կոնկրետացրեց իր անելիքները: Մայիսի սկզբներին Բիշքեկ հրավիրվեցին հակամարտության անմիջական կողմերի (Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի) պատվիրակությունները (ԼՂՀ պատվիրակությունը գլխա-



ԱՇՈՏ ԴՊԼԻՅԱՆ
ԼՂՀ Ազգային ժողովի
Նախագահ

տանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարությունների ղեկավարների ու ԼՂՀ ՊԲ ներկայացուցչի՝ Մոսկվայում կայացած համաձայնագրի մասին, սակայն որերորդ անգամ ադրբեջանցիների մեղքով պայմանավորվածությունը խախտվել էր: Այնուամենայնիվ, Մոսկվայի ճնշմամբ հաջողվեց Ադրբեջանին ստիպել մատելու բանակցությունների սեղանի շուրջ: «Ապրիլի 15-ին տեղի էր ունեցել ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների միտքը, որտեղ ընդունված հայտարարությամբ հակամարտության կողմերին կոչ էր արվում սեղմ ժամկետում դադարեցնել ռազմագործողությունները և հաստատել զինադադարի ռեժիմ, - պատմում է Ա.Ղուլյանը: - Դրանից հետո վեհաժողովն ավելի կոնկրետացրեց իր անելիքները: Մայիսի սկզբներին Բիշքեկ հրավիրվեցին հակամարտության անմիջական կողմերի (Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի) պատվիրակությունները (ԼՂՀ պատվիրակությունը գլխա-

ամեն կերպ փորձում էր խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի պատվիրակության (իբրև առանձին կողմի) մասնակցությանը բանակցություններին, սակայն կազմակերպիչներին հորդորներից հետո ստիպված տեղի տվեց»: Մայիսի 5-ին արդեն միասնական փաստաթուղթը ներկայացվեց ստորագրման: Եվ, չնայած Ադրբեջանի պատվիրակության ղեկավար, մեջլիսի փոխխոսնակ Ա.Ջալիլովը հրաժարվում էր պայմանագրի տակ դնել իր ստորագրությունը, մի քանի օր անց արձանագրությունը ստիպված եղավ ստորագրել խորհրդարանի խոսնակ Ռ. Գուլիելը:

Ուշագրավ է, որ արձանագրության մեջ Լեռնային Ղարաբաղը ճանաչվում է ոչ միայն հակամարտության լիիրավ կողմ, այլև ներկայացվում է որպես հաղթող կողմ: Հայաստանի, Ադրբեջանի և ԼՂՀ պատվիրակությունների ղեկավարներից բացի փաստաթուղթը ստորագրել էին նաև Ղրղզստանի մեջլիսի և ՌԴ պետության նախագահները, մի հանգամանք, ինչն ավելի է արժեքավորում փաստաթուղթը: Այդպիսով, Ռուսաստանի միջնորդությանը 1994թ. մայիսի 12-ին ադրբեջան-ղարաբաղյան ճակատում ուժի մեջ մտավ զինադադարը, որը շուրջ երկու տասնամյակ է, ինչ պահպանվում է՝ բացառապես հակամարտ կողմերի ռազմական հաշվեկշռի շնորհիվ:

Ցավալի է, որ հրադադարի վերաբերյալ ձեռք բերված համաձայնության հիշարժան տարելիցի օրերին երբեմն զավեշտական հայտարարություններ են հնչում Բաքվից: Փորձ է արվում ամստեսել բանակցությունների ընթացքում արձանագրված տեղաշարժը, մինչև իսկ կասկածի տակ է դրվում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքը, սակայն միջազգային հանրությունը հազիվ թե համաձայնի նման զեահատականերին: Ադրբեջանի քաղաքական ուժերի նման պահվածքն այլ կերպ չես որակի, քան դարաբաղյան հարցը փակուղի մտցնելու միտում: Հայաստանի և ԼՂՀ իշխանությունները մեկ անգամ չեն նշել, որ դարաբաղյան խնդրի կարգավորումը պիտի բխի պատմական իրավունքներից, փաստացի իրավիճակից, Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման անհրաժեշտությունից: Այսօր էլ նրանք հավատարիմ են մնում իրենց որդեգրած սկզբունքներին պահանջելով ԼՂՀ անկախության ճանաչումը: Ընդ որում՝ շեշտվել է, որ հիմնահարցի շուրջ ընթացող ցանկացած բանակցություններում պետք է վերականգնվի ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների լիիրավ մասնակցությունը:

վորում էր Աժ խոսնակ Կ.Բաբուրյանը): Մայիսի 3-ին բոլորն արդեն Բիշքեկ էին ժամանել և հաջող օրը համառ ու լարված աշխատանք էր սպասվում»:

Աշտ Ղուլյանի հավաստմամբ, որը պատվիրակության կազմում այդ օրերին գտնվում էր Ղրղզստանում, միասնական փաստաթղթի մշակման և այն պատվիրակությունների ստորագրմանը ներկայացնելու նպատակով ստեղծվել էր աշխատանքային խումբ: «Սկզբնական շրջանում որոշակի լարվածություն էր զգացվում, - հիշում է ԼՂՀ Աժ Նախագահը, - Ադրբեջանի պատվիրակությունն

Համլետ Հայրապետյանը՝ բժշկական գիտությունների դոկտոր



Վ Այունցեցիները մայրաքաղաքում

Սեր հայրենակից, հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս համբավ ունեցող սրտաբան Համլետ Հայրապետյանը 66 գիտական հոդված է հեղինակել: Նրա գիտական աշխատանքները վերաբերում են սրտամկանի ինֆարկտին, սրտամկանի համր իշեմիային, հակաիշեմիկ տարբեր դեղամիջոցների ազդեցությանը, սրտային անբավարարությանը: Դրանից զատ նրա գիտական աշխատանքները ներկայացվել են Սրտաբանների եվրոպական ընկերության եւ Սրտաբանական ամերիկյան քոլեջի ամենամյա վեհաժողովներում 2006-ին եւ վերջին չորս տարում: Ճանաչված սրտաբանի գիտական արդյունքների արգասիքը դոկտորական ատենախոսությունն է, որ նա պաշտպանել է այս տարվա ապրիլի 17-ին:

Համլետ Հայրապետյանը ծնվել է Կապանում 1965 թվականին: 1982թ. ու կն մեղադրվ ավարտել է N1 միջնակարգ դպրոցը: Մարդկանց օգտակար լինելու, նրանց առողջությունը վերականգնելու միանգամայն մարդկային մղումը նրան երեւանի պետական բժշկական ինստիտուտ տարավ, որը 1988-ին ավարտեց գերազանցությամբ՝ ստանալով ընդհանուր թերապեւտի դիպլոմ: Նույն տարում ընդունվել է Կազանի բժշկական ինստիտուտի

օրդինատուրա՝ մասնագիտանալով առողջապահության ամենամուտք բաժիններից մեկում՝ սրտաբանությունում: 1995թ. պաշտպանել է գիտական թեզ՝ ստանալով գիտությունների թեկնածուի աստիճան, 1999 թվականից դոցենտի կոչում ունի:

Գերլարված մեր օրերում տասնապատկվել է սրտանոթային հիվանդություններով տառապողների, բնականաբար, աճել սրտաբանի օգնությունը հայցողների թիվը: Համլետ Հայրապետյանի պրոֆեսիոնալ մակարդակի, մարդկանց օգտակար լինելու ցանկության մասին վկայում են նաեւ այն կապանցիները, ովքեր առողջությունը վերականգնելու նպատակով եղել են մայրաքաղաքում, դիմել նրա օգնությանը: Աշխատանքային գործունեությունը սկսել է «Էրեբունի» բժշկական կենտրոնում՝ սրտաբանության բաժանմունքի բժշկ-օրդինատոր, համատեղությամբ վարել է (2001-2004թթ.) կենտրոնի փոխնախագահի պաշտոնը, 2001-ից մինչեւ այսօր բուժաստատության անհետաձգելի սրտաբանության բաժանմունքի վարիչն է: 2006-ին Սրտաբանների եվրոպական ընկերության կողմից ստացել է եվրոպական սրտաբանի դիպլոմ: Ի դեպ, Համլետ Հայրապետյանը եվրոպական մի շարք հեղինակավոր հաստատություններում մասնագիտական որակավորման եւ վերապատրաստման դասընթացներ է անցել, մասնակցել գիտաժողովների (Փարիզի ժողով

Պոմպիդուի անվան հոսպիտալ, ստացել է սրտաբան-էխոկարդիոգրաֆիստի որակավարում), Մոսկվայի Բակուլեւի անվան սրտանոթային վիրաբուժության գիտական կենտրոն (ինվազիվ սրտաբանի դիպլոմ) եւ այլն: Անդամակցում է էխոկարդիոգրաֆիստների եվրոպական, սրտային անբավարարության եվրոպական, էխոսրտաբանության ամերիկյան ընկերակցություններին, սրտաբանների եվրոպական ընկերության սուր սրտային պաթոլոգիաների աշխատանքային խմբի անդամ է: Նաեւ Հայաստանի սրտաբանների ասոցիացիայի նախագահության անդամ է: Գործնական աշխատանքին զուգընթաց դասախոսում է Երեւանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում՝ 2001 թվականից՝ հետդիպլոմային կրթության ֆակուլտետի սրտաբանության ամբիոնում որպես դոցենտ: Բժիշկների կատարելագործման պետական ինստիտուտի սրտաբանության ամբիոնի դոցենտ է:

Համլետ Հայրապետյանի գիտամակնավարական եւ առողջապահական ոլորտներում գործունեությունն աննկատ չի մնացել: 2011-ին պարգևատրվել է «Միխիթար Հերացի» մեդալով, 2013-ին՝ Նանսենի անվան ոսկե մեդալով, արժանացել է ՀՀ առողջապահության նախարարի եւ Երեւանի քաղաքապետարանի պատվոգրերին, ՀՀ Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրին:

Իրենց զավակով հպարտանալու հերթական առիթն ունեցան Կապանում հարգված եւ ճանաչված մտավորականներ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ Ջանգեզուրի մասնաճյուղի տնօրեն, ԱՊՀ երկրների մասնակավոր էներգետիկ Գրիշա Հայրապետյանը եւ վաստակաշատ մանկավարժ Սուսաննա Բաբայանը: Այս օրերին նրանք եւ մյուս հարազատները շնորհավորանքներ են ստանում: «Այունյաց երկիրը» միանում է շնորհավորանքներին, գիտական բժշկի ծնողներին, հարազատներին, մտերիներին բարեմաղթանքներ հղում, իսկ Համլետ Հայրապետյանին նոր հաջողություններ ցանկանում ինչպես գիտամակնավարական գործունեության, այնպես էլ բնակչության բուժապասարկման ոլորտներում:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Լուրեր

Նորիկ Դանիելյանը 45 տարի է, ինչ բնապահպանության տեսուչ է «Սոսու պուրակ» արգելավայրում: Օրեր առաջ նա գայլերի հարձակումներից փրկել է եվրոպական մի այծյամ, բուժել է վերքերը, կերակրել: Ապրիլի 22-ին կազդուրված այծյամին բնապահպանների, լրագրողների ներկայությամբ բաց են թողել ազատության մեջ: Ինչպես հայտնեց «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի նորանշանակ տնօրեն Սմբատ Համբարձումյանը, իրենք լուրջ հսկողություն են սահմանել ոչ միայն անտառային գիշատիչների, այլև որսագողերի նկատմամբ: Կարգազանցները կպատժվեն օրենքի ողջ խստությամբ:

Ապրիլի 25-27-ը Սիսիանում անցկացվեց հանրապետության վոլեյբոլի 1999-2000թթ. ծնված պատանիների եւ աղջիկների առաջնություն: Ընտրական այդ առաջնությանը Հայաստանի հարավային գոտուց մասնակցում էին Սիսիանի, Գորիսի, Կապանի, Մեղրու, Եղեգնաձորի, Վայքի, Քաջարանի պատանիների եւ աղջիկների թիմերը: Մրցաշարում հաղթող ճանաչվեցին եւ եզրափակչի ուղեգիր ստացան Սիսիանի աղջիկների (մարզիչ՝ Աղվան Հակոբյան) եւ տղաների Կապանի (մարզիչ՝ Սուրիկ Մանուչարյան) թիմերը, որոնք էլ մայիսին Երեւանում կմասնակցեն եզրափակիչ մրցումներին:

Հայոց ցեղասպանության 99-րդ տարելիցի կապակցությամբ Կապանում կազմակերպվեց երթ դեպի Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ տեղի ունեցավ ծաղկեղուման արարողություն: Նույն օրը՝ ապրիլի 24-ին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց պատարագ՝ Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին: Դրանից մեկ օր առաջ Կապանում անցկացվեց ավանդական դարձած քահեբով երթ, որին մասնակցեցին հարյուրավոր կապանցիներ: Երթը կազմակերպել էր ՀՀ-ի Հայաստանի երիտասարդական միությունը, որի կոչին միացել էին ոչ միայն երիտասարդներ, այլև տարբեր ՀՀ-ների եւ կուսակցությունների ներկայացուցիչներ:

Սյունիքը 1-ին աշխարհամարտում. 1914-1918ԹԹ.

1-ԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՂՎԱԾ ԵՎ ԱՆՋԵՏ ԿՈՐԱԾ ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ /ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ/

ՍԿԻԶԲԸ՝ N8 (316)

ԿՅՈՐՈՒ		
5.	Հայրյան Միխայել Հոսեփի	1916
6.	Հակոբյան Իվան Գրիգորի	1918
7.	Հակոբյան Բախշի Գրիգորի	1918
8.	Գասպարյան Բախշի Արամի	1918
9.	Գասպարյան Աղալո Արամի	1918
10.	Գասպարյան Մուշեղ Աղալոյի	1918
11.	Առաքելյան Թովմաս Օհանի	1916
12.	Առաքելյան Սարգիս Օհանի	1916
13.	Մելքունյան Սերգեյ	1918
14.	Մելքունյան Արշակ Մուսաելի	1918
15.	Ավետիսյան Հայկուս Գալուստի	1918
16.	Բուդաղյան Միքայել Մարտիրոսի	1916

ՏԱՆՁՏԱՏԻ		
1.	Սարգսյան Հովհաննես Սարգիսի	1914թ.
2.	Մկրտչյան Սարգիս Մկրտչի	1914թ.
3.	Մկրտչյան Խաչի Մկրտչի	1914թ.
4.	Մելքունյան Իսա Հովակիմի	1914թ.
5.	Հարությունյան Արշակ Գեւորգի	1914թ.
6.	Գյուրջյան Մադրա Հովակիմի	1914թ.
7.	Բեգլարյան Հակոբ Մկրտչի	1920թ.
8.	Հայրապետյան Պողոս	1920թ.
9.	Հարությունյան Գրիշա Ծատուրի	1918թ.
10.	Սահակյան Արշակ Վարդանի	1919թ.
11.	Եղյան Հայրի Առստամի	1920թ.
12.	Հարությունյան Աբրահամ	1920թ.
13.	Հովհաննեսյան Տիգրան Հովհաննեսի	1920թ.

ԽՈՋՆԱԿԱՐ		
1.	Ալավերդյան Հակոբ Գաբրիելի	1915թ.
2.	Հովսեփյան Համբարձում Ալավերդիի	1916թ.
3.	Ալավերդյան Շամիր	1915թ.

ԲԱՅԱՆԴՈՐ		
1.	Թափտուղյան Բալա Գեւորգի	1915թ.
2.	Սողոմոնյան Գալուստ	1914թ.
3.	Եղյան Աթա Առստամի	1918թ.
1.	Լալայան Հովհաննես Լալայի	1920թ.
2.	Բաբայան Արշակ Զաքարի	1920թ.

ԿՈՆՆԻՉՈՐ		
1.	Պետրոսյան Ծատուր	1916թ.
2.	Գրիգորյան Արշակ	1916թ.
3.	Դավթյան Արամ	1914թ.
4.	Բաղդասարյան Հարություն	1916թ.

ՀԱԼԻՉՈՐ		
1	Զորունց Բեգլար Վանեսի	1920
2	Զորունց Սերգեյ Մանբրի	1920

ԶԱՓՆԻ		
1.	Սարգսյան Բենյամին Խաչատուրի	1921
2.	Կարապետյան Աղաբեկ Գրիգորի	1918
3.	Բալասանյան Սարգիս Հակոբջանի	1918
4.	Ալեքսանյան Արմենակ Խուրշուդի	1921
5.	Կարապետյան Հակոբ Անտոնի	1920
6.	Մարտիրոսյան Զավար Եղիշատի	1921
7.	Սարգսյան Եփրեմ Համբարձումի	1921
8.	Մանուչարյան Իսրայել Պատվականի	1919

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀԻՄՆԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԵՑԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
 Գեղամաս՝ (0285) 5 25 63,
 (091) 45 90 47,
 (077) 06 28 02:
 էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
 Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Ելուցիկը ներկայացնում է մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիր» պարտադիր է:

© նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
 Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
 Թնթրը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
 Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 պաշտպան մամուլ:
 Տպագրմանը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
 Ստորագրված է տպագրության 01.05.2014թ.: